«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

«Արցախի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիրը» շարունակում է 2022-23 ուստարվա մրցութային ընդունելությունը ավագ դպրոցի 10-րդ և 11-րդ դասարաններում

Ճեմարանում իրականացվող «Հայրենիքի պաշտպանության և գիտատեխնիկական առաջընթացի համար պատասխանատու օրինապաշտ քաղաքացու ձևավորման» հեղինակային կրթական ծրագիրն ապահովելու է միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխանող բարձրակարգ և լիարժեք կրթություն:

Դիմորդները հանձնում են ընդունելության քննություններ ***հայոց լեզու, մաթեմատիկա, անգլերեն, ռուսերեն***, ինչպես նաև դիմորդի ընտրությամբ՝ ***կամ բնական գիտություններ*** *(ֆիզիկա, կենսաբանություն, քիմիա՝ մեկ հարցաթերթով),* ***կամ հասարակական գիտություններ*** *(հայոց պատմություն, համաշխարհային պատմություն, հասարակագիտություն՝ մեկ հարցաթերթով) առարկաներից:*

Ճեմարանում ուսուցումն իրականացվելու է Երևանի «Շիրակացու ճեմարան» գիտակրթական համալիրի կողմից ընտրված և համապատասխան մասնագիտական վերապատրաստումներ անցած ուսուցիչների կողմից:

Երկրորդ կիսամյակից ուսուցումը կազմակերպվելու է ***հումանիտար, բնագիտամաթեմատիկական և տնտեսագիտական հոսքերով:***

Ճեմարանում ուսումն անվճար է: Ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է երկարացված օրվա աշխատակարգով: Սովորողներն ապահովվում են սննդով:

<u>Պահանջվող փաստաթղթերն են.</u>

- դիմում (լրացվում է սովորողի և ծնողի կողմից տեղում)
- սովորողի ծննդյան վկայականի պատճենը
- սովորողի հիմնական կրթության վկայականի պատճենը (10-րդ դասարան

ընդունվելու համար) կամ 10-րդ դասարանի ամփոփաթերթիկի պատճենը (11-րդ դասարան ընդունվելու համար)

- երկու լուսանկար (3x4 չափսի)
- բնակության վայրից տեղեկանք
- դիպլոմների, պատվոգրերի, գովասանագրերի կամ ակադեմիական այլ նվաճումները հավաստող փաստաթղթերի պատճեններ (առկայության դեպքում)

Փաստաթղթերն ընդունվում են ս.թ. սեպտեմբերի 12-ից մինչև 17-ը, ժամը 10:00-ից մինչև 17:00, ք. Ստեփանակերտ, Հովհ. Թումանյանի անվան թիվ 9 դպրոցի շենքում։
Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել 097 70 09 08 հեռախոսահամարին։